ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

CENTRE FOR POLICY STUDIES

Ժողովրդավարական դիմակայունության առաջխաղացում

Հոդվածաշարում ներառվել են ՔՀԿ նախագահ Արմեն Գրիգորյանի և հետազոտող Վիկտորյա Մելքոնյանի, ինչպես նաև քաղաքագետ, անկախ հետազոտող Էդգար Վարդանյանի հոդվածները:

Հոդվածաշարի խմբագիր՝ Արմեն Գրիգորյան

Հոդվածաշարը նախապատրաստվել է Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից Գերմանիայի արտաքին գործերի նախարարության օժանդակությամբ, «Ճգնաժամային մոդելավորում հանուն խաղաղության» (CRISP) կազմակերպության հետ համատեղ իրականացված «Մեդիագրագիտության և ժողովրդավարական դիմակայունության առաջխաղացում» ծրագրի շրջանակում:

© Քաղաքականության հետազոտական կենտրոն / Centre for Policy Studies

Երևան 2023

Արմեն Գրիգորյան

ՀՀ-ԵՄ համագործակցության դեմ նպատակաուղղված ապատեղեկատվությունը. ժողովրդավարական դիմակայունության հիմնախնդիրները

Գերմանիայի արտաքին գործերի նախարարության օժանդակությամբ՝ «Ճգնաժամային մոդելավորում հանուն խաղաղության» կազմակերպության հետ համատեղ իրականացված «Մեդիագրագիտության և ժողովրդավարական դիմակայունության առաջխաղացում» ծրագրի շրջանակում 2023 թ. հոկտեմբերի 23-ից 27-ը ՔՀԿ-ի և գործընկեր փորձագետները Գերմանիա այցելելու հնարավորություն ունեցան: Այցի ընթացքում Բեռլինում տեղի են ունեցել հանդիպումներ Հայաստան-Գերմանիա և Հայաստան-ԵՄ հարաբերությունների և դրանց առաջխաղացման հնարավորությունների մասին քննարկումներ պաշտոնյաների և հետազոտական կառույցների ներկայացուցիչների հետ՝ մասնավորապես Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող գործընթացները ու ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումն ուսումնասիրող հետազոտողների հետ, ինչպես նաև տեղեկատվական դաշտը և ապատեղեկատվության հետ կապված խնդիրներն ուսումնասիրող հետազոտողների, նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Խմբի համար նաև ընդունելություն է կազմակերպվել Գերմանիայում ՀՀ դեսպանատանը, որտեղ դեսպան Վիկտոր Ենգիբարյանի հետ քննարկումը ևս անդրադարձավ հայ-գերմանական երկկողմ հարաբերություններին, ԵՄ-ի հետ հարաբերություններին առնչվող գործընթացներին, ինչպես նաև այսօրինակ հարաբերությունները զարգացնելու հեռանկարներին՝ մասնավորապես փարձագետների և քաղաքացիական հասարակության ընդլայնված ներգրավման հնարավորությամբ:

Տեղի ունեցած քննարկումները, ինչպես նաև վերջին շրջանում տարբեր ձևաչափերով տեղի ունեցած քաղաքական գործիչների հետ հանդիպումները, փորձագիտական քննարկումները և այլ իրադարձությունները թույլ են տալիս նշել, որ երկուստեք կա փոխադարձ հետաքրքրություն՝ Հայաստան-ԵՄ հարաբերությունների պոտենցիալն առավելագույնս բացահայտելու և դրանց ընդլայմանը նպաստելու նկատմամբ: Սակայն պետք է, թերևս, նաև նշել, որ դա պահանջում է շարունակական աշխատանք. մի կողմից, անհրաժեշտ է տեղեկացվածության ընդլայնում՝ Հայաստանի առջև ծառացած խնդիրների և կարիքների մասին, իսկ դրա հետ կապված՝ մեր կողմից է անհրաժեշտ առավե՛լ հետևողականորեն ներկայացնել խնդիրները, գնահատել կարիքները և դրանք ներկայացնել թե գործընկեր գերմանացի փորձագետներին, թե որոշումների կայացման համար պատասխանատուներին՝ այդ թվում ջատագովության միջոցառումների միջոցով՝ Հայաստանում, ԵՄ-ում և անդամ պետություններում:

Միևնույն ժամանակ, նկատելի է, որ Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացման, և առհասարակ՝ արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման փորձերին զուգահեռ ոչ միայն ավելացել է ՀՀ-ԵՄ համագործակցության դեմ նպատակաուղղված ապատեղեկատվության և քարոզչության ինտենսիվությունը, այլև նմանատիպ քարոզչությունում ներգրավված լրատվամիջոցները և գործիչները նոր թիրախներ են գտնում: Վերջին շրջանում այդպիսի թիրախներից են ԵՄ-ի միջնորդական ջանքերը, ԵՄ դիտորդական առաքելությունը, ընդ որում, հայաստանյան լրատվամիջոցների և գործիչների նմանատիպ քարոզչությունը

մշտապես համընկնում է ռուսական և ադրբեջանական քարոզչության հետ: Նույնը վերաբերվում է Հռոմի կանոնադրության վավերացմանը և Միջազգային քրեական դատարանին Հայաստանի միանալուն, ՀԱՊԿ-ի գործունեությունից ձեռնպահ մնալուն, Ֆրանսիայի և Հնդկաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը և առանցքային նշանակություն ունեցող այլ գործընթացներին: Որպես սրա հետ փոխկապակցված երևույթ կարող է դիտարկվել նաև վերջին շրջանում Հնդկաստանից ներգաղթածների հանդեպ ատելության խոսքի տարածման աճը:

Շարունակվում է նաև ինքնության խնդիրների չարաշահումը, նաև դրա հետ փոխկապակցված Արևմուտքի այսպես կոչված բարոյական անկման խնդիրը, որն արդեն ավելի քան երկու տասնամյակ հայկական քաղաքական դիսկուրսում քարոզչության մշտական թեմաներից է՝ առնվազն դեռ այն ժամանակվանից, երբ 1996 թ. Հայաստանը հայտ ներկայացրեց անդամակցելու Եվրոպայի խորհրդին, և 2001 թ. անդամակցեց դրան: Այդ ժամանակվանից ի վեր, որոշ գործիչներ ընդդիմանում էին միջազգային չափանիշների կապակցությամբ ստանձնած որոշ պարտավորությունների կատարմանը: Եղել են բազմաթիվ պնդումներ առ այն, որ Արևմուտքին հատկանշական է նյութապաշտությունը և մեղսագործությունը, իսկ արևմտյան արժեքները հավասարազոր են «ավանդական» կրոնական համոզմունքների ուրացմանը և սեռական այլասերվածություններին:[1]

Միևնույն ժամանակ, ինչպես մասնավորապես նշվել է 2023 թ. դեկտեմբերի 5-ին կայացած «Ապատեղեկատվություն և կեղծ խոսույթներ. հիբրիդային սպառնալիքներ» թեմայով համաժողովում, շարունակական բնույթ է կրում նաև անվտանգությունը ժողովրդավարությանը հակադրելը: Այդ կեղծ գաղափարը տարբեր կրիտիկական պահերի է ի հայտ եկել. Այն բազմիցս օգտագործվել է ընտրությունների ժամանակ՝ ընդդիմության դեմ քարոզչության նպատակով, մասնավորապես այնպիսի մեղադրանքներով, որ ընդդիմությունը ցանկանում է խախտել անվտանգային համակարգը, ինչպես ասվում էր 2003, 2008, 2009, 2013 թթ. ընտրությունների ժամանակ: 2013 թ. մեկ գիշերում Մաքսային միությանը միանալու որոշումը նույնպես հիմնավորվում էր անվտանգության նկատառումներով: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, 2021թ. ընտրություններից առաջ նմանօրինակ քարոզչությունն ինտենսիվորեն օգտագործվում էր արդեն ընդդիմության կարգավիճակում հայտնված նախկին իշխանության ներկայացուցիչների և նրանց աջակիցների կողմից, և դա շարունակվում է մինչ օրս:[2]

2022 թ. մարտի 11-ին «Freedom House»-ի կազմակերպած «Պրոպագանդան ու ապատեղեկատվությունը Ուկրաինայում կոնֆլիկտի համատեքստում: Ինչպե՞ս հայկական անկախ մեդիան ու քաղաքացիական հասարակությունը կարող են պայքարել այս պատմույթների դեմ» թեմայով քննարկման ընթացքում մասնավորապես նշվել էր, որ կան «ունիվերսալ» քարոզչական նարատիվներ՝ հիմնված Արևմուտքի կողմից «ավանդական արժեքներին» և ինքնությանն իբր սպառնացող վտանգի մասին պնդումների վրա, և հատուկ Հայաստանի համար

[1] Արմեն Գրիգորյան, «Որոշ քարոզչական մեթոդների և դավադրության տեսությունների ծագումն ու գործածումը»: Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ, 11 մարտի 2020 թ., https://www.lragir.am/2020/03/11/525879/

[2] «Ապատեղեկատվություն և կեղծ խոսույթներ. հիբրիդային սպառնալիքներ», 5 դեկտեմբերի 2023 թ., https://www.youtube.com/live/HokDBQof5NQ?t=1006

մշակվածներ, որոնք Արևմուտքը նույնականացնում են Թուրքիայի հետ: Նմանատիպ քարոզչություն է տարվում երկու խմբի կողմից՝ հայաստանյան ընդդիմության՝ իշխանափոխություն իրականացնելու նպատակով և ռուսաստանյան վերնախավի կողմից՝ Հայաստանում թույլ, հնազանդ կառավարություն ունենալու նպատակով:[3]

Կարելի է նկատել, որ «ունիվերսալությունը» բավական նկատելի է. մասնավորապես, Վրաստանում, Ուկրաինայում և Մոլդովայում ևս 2011-2013 թթ. ակտիվ էին այսպես կոչված «ծնողական կոմիտեները», նաև այլ կառույցներ, որոնց ըստ էության միակ առաքելությունը ԵՄ-ի հետ ասոցացման գործընթացների դեմ քարոզչությունն էր: Այժմ էլ Վրաստանում ևս շրջանառվում է «Ռուսաստանի դեմ երկրորդ ճակատի» մասին խոսույթը, և այլն:

Ինչ վերաբերում է հատուկ Հայաստանի համար մշակված քարոզչական թեզերին, արդեն 44-օրյա պատերազմին հաջորդած շրջանում քարոզչության օրինակներից կարելի է հիշատակել սահմաններին առկա լարվածության օգտագործումը՝ անվտանգությունը ժողովրդավարությանն ու ինքնիշխանությանը հակադրելու նպատակով: Դրա օրինակներից է 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններին նախորդած ընտրարշավի ընթացքում «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռ. Քոչարյանի պնդումը, որ ԵՄ-ի 2,6 մլրդ. եվրոյի օժանդակության փաթեթն իբր «ուղղված է Ռուսաստանի դեմ», ու արդեն հետընտրական ժամանակաշրջանում ընդդիմության հետ կապված գործիչների և որոշ ռուս փորձագետների պնդումները, որ դա «Հայաստանի արտաքին քաղաքական վեկտորի փոփոխության» կամ «հայ-ռուսական հարաբերությունների քայքայման» գինն է: Դրա հետ մեկտեղ, արդեն 2022 թ. Ռ. Քոչարյանը ՌԴ-ի հետ միութենական պետության կազմում լինելը ներկայացրել է որպես «տարածաշրջանում գործոն լինելու լուծումներից մեկը»: ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովի՝ Ռուսաստան-Արևմուտք առճակատման խնդրի շահարկումը և հայտարարությունը, որ «Ռուսաստանի հետ դաշինքն այլընտրանք չունի», կամ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արամ Վարդևանյանի մանիպուլյատիվ, կեղծ երկընտրանքի վրա հիմնված պնդումը. «Ավելի լավ է Ռուսաստանի հետ միութենական պետություն ստեղծել, քան Թուրքիայի» նույնպես այդ տրամաբանության մեջ են տեղավորվում: Բացի այդ, հետպատերազմյան շրջանում՝ մասնավորապես 2022 թ. գարնանը տեղի ունեցած «Դիմադրության» շարժման ցույցերի ընթացքում, կրկնվել է կոռուպցիայի դրական ազդեցության մասին միտքը. ըստ դրա՝ Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի կառավարման օրոք կոռուպցիան որոշակի առումով անգամ նպաստել էր բանակի մարտունակությանը, հետևաբար նաև՝ անվտանգության ապահովմանը:

Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ այդ դաշտում գործող քաղաքական ուժերը Հայաստանի կառավարությանն անընդհատ մեղադրում են Ռուսաստանի հետ կապերը թուլացնելու, կամ այդ հարաբերությունները բարդացնելու համար, և միաժամանակ ասվում է, որ Ռուսաստանի կողմից դաշնակցային պարտավորությունները չկատարելը իր թուլանալու պատճառով է՝ Ուկրաինայի դեմ պատերազմի հետեւանքով: Ինչո՞ւ այդ պարտավորությունները Ռուսաստանը չէր կատարում այդ պատերազմից առաջ, դեռեւս առնվազն 2021թ. մայիսից, այդ խոսույթի դեպքում պարզ չի դառնում և նրանք, ովքեր դա օգտագործում են՝ այդ

[3] Մեդիա կենտրոն, 11 մարտի 2022 թ., https://www.facebook.com/mediacenterarmenia/videos/329185175928667/

հարցին չեն պատասխանում: Ցավոք, արևմտյան որոշ փորձագետների և քաղաքական գործիչների մոտ էլ կա այդ ընկալումը, թե իբր Ուկրաինայի դեմ պատերազմի հետևանքով Ռուսաստանի թուլացումն է այդ խնդիրներն առաջացրել:[4]

Բացի այդ, որոշ ընդդիմադիր գործիչներ պնդում են, որ «Թուրքիան և Ադրբեջանը, միևնույն է, կստանան միջանցք՝ լինի Ռուսաստանի, թե Արևմուտքի միջոցով»: Հաշվի առնելով նաև նրանց կողմից Հայաստանի հասցեին հնչեցված մեղադրանքները՝ Ռուսաստանի նկատմամբ «խելոք չպահելու» մասին և այլ պնդումներ, կարելի է ասել, որ նրանց համար առաջնային է ռուսական վերահսկողությամբ միջանցքի բացման խնդիրը: Մատնանշենք նաև 2023 թ. նոյեմբերի 30-ին խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչ Աղվան Վարդանյանը Հանրային հեռուստատեսության եթերում՝ Պետրոս Ղազարյանի հետ զրույցում, հիմնավորում էր ընդդիմության մինչ այժմ ունեցած ակտիվությունը՝ մասնավորապես «Դիմադրության» շարժման ընթացքում, և, ազդարարելով այն շարունակելու մտադրության մասին, ըստ էության խոստովանեց, որ իրենց նպատակը դարձյալ ռուսական վերահսկողությամբ միջանցքի ստեղծումն է:

Հարկ է նաև նշել, որ հաճախակի խնդրահարույց է ոչ միայն ապատեղեկատվության և քարոզչության տարածման գործում մասնագիտացած լրատվամիջոցների, այլև այլոց մատուցած լրատվությունը ևս: Օրինակ՝ 2023 թ. նոյեմբերի 20-ին Հանրային հեռուստատեսության լրատվական թողարկումներում տեղ էր գտել Ֆինլանդիայի կողմից Ռուսաստանի հետ սահմանին գտնվող անցակետերը փակելու մասին լուրը, ընդ որում՝ ամբողջությամբ ընթերցվել էր ՌԴ ԱԳՆ-ի ներկայացուցչի հայտարարությունը, սակայն ֆիննական կողմի տեսակետն առհասարակ չի ներկայացվել, ու նաև միջազգային լրատվության հիման վրա վերլուծության փորձ չի կատարվել: Կարելի է նաև մատնանշել դեպքեր, երբ լուրերում օգտագործված տեսաշարն ինքնին քարոզչական բնույթ է ունեցել՝ ամռանը Ֆրանսիայում տեղի ունեցած խժդժությունների մասին, մինչ այդ՝ «դեղին բաճկոնների» ելույթների ժամանակ, և այլ դեպքերում ՝ մասնավորապես, ստեղծելով անվերահսկելի, քաոսային վիճակի տպավորություն: Այս համատեքստում տեղին է կրկնել նախկինում տեղեկատվական անվտանգության ամրապնդման, այդ թվում՝ ապատեղեկատվության և մանիպուլյացիաների դեմ նպատակաուղղված աշխատանքի, հանրային իրազեկման և մեդիագրագիտության ու քննադատական մտածողության զարգացման նպատակով առաջ քաշած քաղաքականության առաջարկներից մեկը. «Ապատեղեկատվության տարածումից խուսափելու համար լրատվամիջոցները պետք է հրաժարվեն երրորդ երկրների մասին տեղեկություններ հաղորդելիս ռուսական աղբյուրներից օգտվելուց»:[5]

Դեկտեմբերին ընդունված Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգով սահմանվում է դրա գլխավոր նպատակը՝ «ապահովել պատշաճ արձագանք ընդդեմ ապատեղեկատվության՝ կանխարգելելով, նվազեցնելով ու չեզոքացնելով

---

[4] «Ապատեղեկատվություն և կեղծ խոսույթներ. հիբրիդային սպառնալիքներ», 5 դեկտեմբերի 2023 թ., https://www.youtube.com/live/HokDBQof5NQ?t=1006

[5] Արմեն Գրիգորյան, «Հայաստան-ԵՄ համագործակցության շարունակականություն. տեղեկատվական անվտանգության բաղադրիչը», Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի հանրային քաղաքականության հետազոտությունների ծրագիր, 2022 թ., էջ 15, https://osf.am/wp-content/uploads/2022/07/ՀՀ-ԵՄ-համագործակցության-շարունակականություն.-տեղեկատվական-անվտանգության-բաղադրիչը.pdf

ապատեղեկատվության ռիսկերը». ըստ այդմ՝ նախատեսվում է քաղաքացիական կրթության ազգային ծրագրերի միջոցով ձևավորել հանրային հակազդեցություն ապատեղեկատվության նկատմամբ, նպաստել պաշտոնական տեղեկությունների մատչելիությանը և պրոակտիվ հաշվետվողականությանը, ստեղծել ապատեղեկատվության, հիբրիդային տեղեկատվական գրոհների/արշավների կանխարգելման/տարածման նվազեցման և հակազդեցության գործուն մեխանիզմներ՝ հաշվի առնելով, ներդնելով և տեղայնացնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև կարողությունների զարգացման ծրագրերի միջոցով հզորացնել ՀՀ պետական կառույցների կարողությունը ապատեղեկատվությունը կանխելու, հայտնաբերելու և վերլուծելու նպատակով:[6] Ինչպես նշվել էր վերջերս իրականացված հետազոտություններից մեկում, 2020 թ. ընդունված Ազգային ռազմավարությունում մասնավորապես նշված էր, որ «ավելի հաճախակի է դարձել տարատեսակ ապատեղեկատվական գործիքների կիրառումը, ինչը թիրախավորում է ժողովրդավարական արժեքները: Ռազմավարությամբ նախատեսվում է զարգացնել ազգային տեղեկատվական և կիբերանվտանգության կարողությունները, սակայն մինչ այժմ բավարար առաջընթաց չի արձանագրվել»,[7] և ապատեղեկատվությանը հակազդելուն ուղղված ռազմավարությունները եղել են հատվածական և ուղղիչ բնույթի, այլ ոչ թե համապարփակ ու ապագային միտված, մինչդեռ նոր ռազմավարությունը նախատեսում է կառավարության և մասնավոր հատվածի ավելի մեծ ներգրավվածության հնարավորություն:[8]

Այդ համատեքստում կարելի է նշել, որ Քաղաքականության հետազոտական կենտրոնը գործընկերների հետ համատեղ կշարունակի նպաստել ապատեղեկատվությանը հակազդելուն ուղղված ջանքերին՝ հիմնվելով պետական ծառայողների համար ռազմավարական հաղորդակցության դասընթացների, դասավանդողների, երիտասարդ փորձագետների և ուսանողների համար մեդիագրագիտության դասընթացների կազմակերպման, ինչպես նաև վերլուծությունների առկա փորձի վրա:

[6] «Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգ 2024-2026», e-gov, 2023, https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/GV65-3FA5-9437-87B6/1319.1.pdf
[7] Քարինա Ավետիսեան, «Հայաստանի պայքարն ապատեղեկատվության դեմ. դեպի ողջ հանրությանը ներգրավելու մոտեցո՞ւմ», Freedom House, 2023, էջ 6, https://freedomhouse.org/sites/default/files/2023-11/Armenia's-Fight-Against-Disinformation_AM.pdf
[8] Նույն տեղում, էջ 2

Վիկտորյա Մելքոնյան

Ապատեղեկատվության սկզբնավորման և տարածման գործում սոցիալական ցանցերի դերը

Ժամանակավրեպ տեղեկատվությունը ստեղծում է հանրային և պետական հաղորդակցության ներսում տեղեկատվական խոռոչ, որն անխուսափելիորեն լցվում է ապատեղեկատվությամբ և կեղծ տեղեկատվությամբ:

Նախաբան

Սոցիալական մեդիան վիրտուալ հաղորդակցության կազմակերպման ու կայացման անսահմանափակ տիրույթ է, որը, մի կողմից, ենթադրում է ներսում շրջանառվող տեղեկատվություն, մյուս կողմից՝ տեղեկատվությունը կրող և հասցեատեր սուբյեկտներ:

Սոցիալական մեդիայի զարգացումը որակային փոփոխության է ենթարկել տեղեկատվությունը և առցանց լրատվական դաշտում այսպես կոչված «համացանցային ազատությունը», իսկ դրա շուրջ գիտական և վերլուծական դիսկուրսը ենթարկել է սոցիալական մեդիայի դերի ու նշանակության հակասականության բարձրաձայնմանը: Օրինակ, խնդրահարույց է այն պնդումը, թե սոցիալական մեդիան նպաստում է ժողովրդավարական զարգացմանը և ամրապնդմանը, կամ իրարամերժ են փաստարկները, թե սոցիալական մեդիայի ամենօրյա օգտագործումը ինչ հետևանքներ է թողնում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության վրա:

Այդուհանդերձ, առավել որոշակի է սոցիալական մեդիայի դերի հարցը ապատեղակատվության տարածման համատեքստում: Ավանդական մեդիայի համեմատաբար լավ մշակված և սահմանափակ քանակությամբ լրատվական աղբյուրներին փոխարինելու են եկել առցանց լրատվական հարթակները, որոնք աննախադեպ են իրենց մեծ քանակով և յուրաքանչյուրին թույլ են տալիս հրապարակել տեղեկատվություն՝ առանց փաստերի ստուգման ու խմբագրական քննադատության:[1]

Սոցիալ-քաղաքական նշանակության սխալ տեղեկատվությունը վտանգավոր արագությամբ տարածվում է սոցիալական մեդիայում՝ մարդկանց ստիպելով առերեսվել ապատեղեկատվությանը կամ կեղծ տեղեկատվությանը:[2]

Այս համատեքստում կարևոր է նշել, որ լրատվության տեսքով հանրությանը ներկայացվող կեղծ և մտացածին պատմությունները կարող են ունենալ վնասելու նպատակ (ապատեղեկատվություն)[3] կամ պարզապես լինել ոչ պրոֆեսիոնալ և

[1] Allcott, H., & Gentzkow, M. (2017). Social Media and Fake News in the 2016 Election. (January 2017). NBER Working Paper (23089).
[2] Koohikamali, M., & Sidorova, A. (2017). Information Re-Sharing on Social Network Sites in the Age of Fake News. Informing Science, 20.
[3] Vaccari, C., & Chadwick, A. (2020). Deepfakes and disinformation: Exploring the impact of synthetic political video on deception, uncertainty, and trust in news. Social Media+ Society, 6(1), 2056305120903408.

անփույթ աշխատանքի հետևանք, որի հիմնանպատակը վնաս հասցնելը չէ (կեղծ տեղեկատվություն):[4] Բանկանաբար, վերջինս ևս չի ապահովագրում լրատվություն սպառողներին տարածվող սխալ տեղեկատվության, շատ դեպքերում, անդառնալի բացասական ազդեցությունից: Ավելին, պետք է նկատել, որ ապատեղեկատվություն պարունակող հոդվածում կան ստույգ տեղեկատվությամբ հիշատակումներ, որոնց առկայությունը առավել մեծ շփոթ է առաջացնում ընթերցողների շրջանում և խոչընդոտում ապատեղեկատվության արագ տարբերակման հնարավորությանը: Այսպիսով, աջակցելով այն տեսակետին, որ, մի կողմից, համացանցում ապատեղեկատվությունից հնարավոր չէ խուսափել, սակայն թվային ու մեդիա գիտելիքների համալրումը, ինչպես նաև քննադատական մտածողության ցուցաբերումը կարող են կանխել ապատեղեկատվության հետագա տարածումը,[5] մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակության և ինքնին մեդիայի՝ որպես առանձին ինստիտուտի դերը, ինչպես նաև ժողովրդավարական արժեքների պահպանությունը առավել քան երբևէ կարևոր են ապատեղեկատվության դեմ պայքարում,[6] այս աշխատանքը կներկայացնի սոցիալական մեդիան որպես թվային ապատեղեկատվության սկզբնավորող և տարածող՝ առանձնացնելով սոցիալական մեդիայում ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները և առանձնահատկությունները: Որպես ամփոփում կառաջադրվեն ակտուալ առաջարկություններ՝ թվային միջավայրի կարգավորման և ապատեղեկատվության ազդեցության սահմանափակման համար:

Մարդկային հույզերը սոցիալական թվային հարթակներում

Եթե մենք համաձայնենք, որ մարդկանց կյանքի շարժիչ ուժը էմոցիաներն էն, ապա պետք է ընդունենք, որ, մի կողմից, դրանք մարդկանց դարձնում են անկազմակերպ և խաթարում են կյանքի բնականոն ռիթմը, մյուս կողմից՝ ոգեշնչում և ուղղորդում են նոր փոփոխությունների ու ձեռքբերումների: Ազգային, պետական և քաղաքական նշանակության բուռն իրադարձությունները, պատմական շրջադարձերը, համամարդկային աղետները, գլոբալ ճգնաժամերը, պատերազմները և այլ նշանակալի ու մասշտաբային իրողությունները մեծամասամբ ուղեկցվում են հասարակական հույզերի վայրիվերումներով, որոնք մարդկանց զրկում են իրողությունները օբյեկտիվորեն ընկալելու և սթափ վերլուծելու ունակությունից:

Սկզբում մարդկանց միավորում է ծանր կորստի և համընդհանուր ցավի զգացողությունը, հետո արդեն բաժանում է այդ իրողություններում մեղավորների փնտրտուքը՝ անձանց, ինստիտուտների կամ քաղաքական դերակատարների տեսքով (իշխանություն, ընդդիմություն, վերպետական կազմավորումներ, առևտրային կազմակերպություններ, պետություններ, պետությունների միավորումներ և այլն): Վառ օրինակ կարող է ծառայել կորոնավիրուսի համավարակը, երբ վիրուսի գլոբալ տարածման, մարդկային մեծաքանակ զոհերի, սոցիալական-տնտեսական ճգնաժամի հետ զուգահեռ սոցիալական ՁԼՄ-ով տարածվում էր իրողությունը քաղաքականացնող և «առողջապահական ճգնաժամ»

[4] Campan, A., Cuzzocrea, A., & Truta, T. M. (2017, December). Fighting fake news spread in online social networks: Actual trends and future research directions. In 2017 IEEE International Conference on Big Data, pp. 4453-4457. IEEE.
[5] Hilary, I. O., & Dumebi, O.-O. (2021, August). Social Media as a Tool for Misinformation and Disinformation Management. Linguistics and Culture Review, 5(S1), p. 502
[6] Grigoryan A., (2021). Disinformation resilience index in Central and Eastern Europe in 2021. ISBN: 978-83-962614-1-0, (pp. 32-53

համատեքստը շրջանցող ապատեղեկատվություն և դավադրապաշտական տեսություններ:[7]

Այս բոլոր փուլերում ՁԼՄ-ները ուղղորդում են մարդկային հույզերը, քանի որ ցանկացած լրատվություն՝ ճիշտ թե սխալ, գտնում է իր սպառող-լսարանին:

Սոցիալական մեդիայում հեղինակությունների գործունեության ֆենոմենը

Կեղծ տեղեկատվության տարածման գործում ոչ պակաս ներդրում ունեն սոցիալական հարթակներում հայտնի և ազդեցիկ դեմքերը՝ այսպես կոչված ինֆլյուենսորները: Մասնավորապես, եթե նրանք այս կամ այն քաղաքական ուժի և գաղափարների կողմնակից են, իրենց արտահայտած գաղափարներն ու կոչերը կարող են լինել խիստ սուբյեկտիվ ու կտրական, բայցև՝ գտնեն աջակցություն մեծաքանակ լսարանի շրջանում:

Լրատվություն պատճենող, կիսազվարճացնող և կիսալրատվական առցանց լրատվամիջոցների գործունեությունը

Սոցիալական մեդիայում գործառնող և լրատվություն տարածող ոչ բոլոր հարթակներն ունեն ՁԼՄ-ի կարգավիճակ: Դրանցից ոմանց հիմնական նպատակը սոցիալական մեդիայում ոչ առողջ բանավեճերի հրահրումն է, տրամադրությունների գեներացումը և հանրային մանիպուլյացիան: «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը» կիսալրատվական կամ կիսազվարճացնող նման կայքերին անվանում է «սունկ» լրատվամիջոց:[8] Նրանք բազմանում են սնկերի նման և չեն ստեղծում սեփական բովանդակություն: Կարելի է անգամ նկատել, որ շատ արագ բազմանելու հետ մեկտեղ, նրանք նաև շատ արագ ջնջվում են առցանց լրատվական տիրույթից:

Սա ենթադրում է, որ կա անհրաժեշտություն «զանգվածային լրատվամիջոց» հասկացության համապարփակ և համակողմանի սահմանման խիստ անհրաժեշտություն՝ հաշվի առնելով տեխնոլոգիաների արագ զարգացումը՝ սրանից կախված նաև տեղեկատվության աղբյուրների բազմազանեցումը:

Ժամանակակից պայմաններում ՁԼՄ-ների այն սահմանումները, որոնք մենք ավանդաբար հանդիպում ենք գրականությունում, չեն արտահայտում ներկա իրողությունները: Հենց սրանից է բխում այն արդարացի պահանջը, որ տերմինը ոչ միայն պետք է արդիականացվի, այլև դառնա օրենսդրական սահմանում՝ նպաստելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի նշանակալի բարեփոխումներին: Մեդիա կենտրոնները, հայկական լրագրողական համայնքը բազմիցս բարձայնել են, որ, չնայած 2020 թ. «զանգվածային լրատվական միջոց» սահմանման մեջ լրացում կատարվեց և «սեփական կամ վարձակալած դոմեն և

[7] Մելքոնյան Վ. (2022). Դավադրապաշտական տեսությունները COVID-19 համավարակի քննարկման առանցքում, Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ ֆակուլտետ, № 2, էջ 59-72, Քաղաքագիտություն, https://doi.org/10.46991/BYSU:D/2022.13.2.059
[8] Տե՛ս https://media.am/hy/verified/2019/02/15/11062/

հոսթինգ» ունեցող կայքերը ևս մտան իրավական դաշտ,[9,10] այնուամենայնիվ, դա բավարար չէ և ամբողջապես չի լուծում սահմանման բացը:

Լրագրողական գործունեության կարգավորումն առցանց տիրույթում

Դժվար է պատասխանել հարցին, թե՝ ով է լրագրող, իսկ ով՝ ոչ: Քաղաքացիական լրագրողի ինստիտուտի լայն տարածումը և «հասարակության իրազեկման մարդ-ինստիտուտի» գործառնումը հասարակության աչքում լրագրողի մասնագիտությունը իջեցնում են «բակային» մակարդակի, քանի որ իրենց գործունեությամբ չեն համապատասխանում մասնագիտական էթիկայի նորմերին և փոխանցում են սուբյեկտիվ և ուղղորդող ուղերձներ:

Ավելին, այս կամ այն քաղաքական շրջանակի պատկանող կամ օլիգարխիկ շահեր սպասարկող անձինք կարող են մանիպուլյացնել մատուցվող լրատվությունը և խարխլել հասարակության շրջանում անկախ լրագրության հանդեպ վստահությունը: Մինչդեռ, մի շարք երկրներում օրենքով սահմանված կարգով և լրագրողական էթիկայի սահմաններում գործառնող ցանկացած անձ կարող է զբաղվել լրագրությամբ և ներկայանալ որպես լրագրող: Հակառակ դեպքում առաջ է գալիս մարդկանց ինքնարտահայտման, խոսքի ազատության սահմանափակման խնդիրը:

Սոցիալական մեդիայի ալգորիթմները՝ ապատեղեկատվության տարածման աղբյուր

Սոցիալական մեդիան կառուցվում է այնպիսի ալգորիթմներով, որոնք առաջարկում են մարդկանց տեղեկատվություն կամ բովանդակություն՝ հիմնվելով խմբային նախապատվությունների վրա: Այսինքն՝ կախված նրանից, թե անհատն ինչ խմբի ներկայացուցիչ է, ինչ հետաքրքրություններ ունի համացանցում, ովքեր են նրա ընկերները և, համապատասխանաբար, ինչպիսի վիրտուալ հակումներ ունեն իրենք, ամենայն հավանականությամբ տվյալ անհատը կստանա նմանատիպ բովանդակությամբ առաջարկներ:

Այս շրջափուլը ենթադրում է նաև տեղեկատվության տարածում՝ նամանավանդ, երբ տեղեկատվությունն ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է անհատի քաղաքական հայացքներին կամ քաղաքացիական դիրքորոշմանը, այն տարածվում է՝ առանց երկար մտածելու կամ տեղեկատվության հավաստիությունն ու օբյեկտիվությունը ստուգելու: Այս տրամաբանությամբ էլ տարածվում է ապատեղեկատվությունը՝ և՛ դիտավորությամբ, և՛ առանց դրա:

Հաշվի առնելով, որ ապատեղեկատվությունը միշտ չէ, որ ակնհայտ է և, եթե հիմնվենք կոգնիտիվ տեսությունների վրա, ապա մարդիկ, առհասարակ, դժվար են ճանաչում

[9] Մինչև 2020թ. «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը կարգավորում էր ավանդական ՁԼՄ-ների գործունեությունը: Չնայած «ՁԼՄ»-ի 2003 թվականի սահմանման համաձայն թվում էր, թե օրենքի բոլոր պահանջները վերաբերում էին նաեւ ինտերնետային մամուլին՝ «որպես տեղեկատվության ցանցային միջոցների», գործնականում վերջիններս չէին հետեւում այդ պահանջներին և դրա համար ոչ մի պատասխանատվություն չէին կրում:

[10] «Հայաստանի մեդիա օրենսդրության խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները միջազգային փորձի հիման վրա: Զեկույց՝ լրատվամիջոցների օրենսդրական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունների հիմքով», «Ռեգիոն» հետազոտական կենտրոն, 2022, էջ 6

և տարբերակում այն ինչն իրական է,[11] ապա կարելի է վստահաբար արձանագրել, որ համակարգային առումով սոցիալական մեդիան ինքնին նպաստում է տեղեկատվություն սպառողների շրջանում ապատեղեկատվության անխոչընդոտ տարածմանը:

«Ավելի շատ բովանդակություն տարածող, քան ստեղծող» օրինաչափությունը և դրա կապն ապատեղեկատվության տարածման հետ

Փորձագետները պնդում են, որ ապատեղեկատվություն հիմնականում տարածում են այն օգտահաշիվ-կայքէջերը, որոնք իրենց գործունեության մասին չեն ներկայացնում ամբողջական տվյալներ, չեն նշում հոդվածների հեղինակներին և նյութերի սկզբնաղբյուրները կամ, առհասարակ, մարդկանց ուղղորդում են դեպի սխալ կամ անհայտ աղբյուրներ: Օրինակ, հայաստանյան լրատվական տիրույթում կորոնավիրուսի մասին լրատվական հոդվածների 62%-ը արտատպվել է այլ աղբյուրներից, իսկ հոդվածների 20%-ում հեղինակ կամ աղբյուր նշված չի եղել:[12]

Փաստորեն, նմանօրինակ հոդվածները ներկայացնում էին երրորդ՝ անհայտ կողմի տեսակետներ, որոնք հիմնված չէին ստույգ, օբյեկտիվ և փաստարկված տեղեկատվության վրա:

Թեզերն ու դավադրապաշտական տեսությունները՝ ապատեղեկատվության և ատելության աղբյուր

Պետք է նկատի ունենալ, որ դավադրապաշտական տեսությունները մեծամասամբ գլոբալ աշխարհաքաղաքական շահեր են հետապնդում և փորձագետների պնդմամբ տեղական լրատվական դաշտում տարածվում են այլ՝ արտասահմանյան լրատվական աղբյուրների միջոցով:[13] Դավադրապաշտական տեսությունները իրենց հերթին հյուսում են տարբեր թեզեր, որոնք էլ դառնում են տվյալ ժամանակի հասարակական խոսույթի անբաժան մաս:

Համավարակի տարածումը ուղեկցվեց զանազան դավադրապաշտական տեսությունների տարածմամբ՝ սկսած Բիլ Գեյթսի հիմնադրամի ներգրավվածությունից, մինչև 5G աշտարակներ և մեծ տերությունների քաղաքական բախում: Իսկ արդեն ներհասարակական շրջանակներում այս և մի շարք այլ դավադրապաշտական տեսությունների հետ զուգահեռ կարելի էր նկատել մի շարք քաղաքական թեզերի շրջանառում, ինչպիսին են՝ «հայկական Արմենիկում դեղը կարող է բուժել կորոնավիրուսը»,[14] «կորոնավիրուսը կմահանա, եթե սառը եղանակին հիվանդը երկար ժամանակ մնա դրսում», «չծխող մարդիկ ավելի շատ են վարակվում կորոնավիրուսով, քան ծխողները», «իշխանությունն օգտագործում է կորոնավիրուսը սեփական շահերի համար»: Նույն տարամաբանությամբ էլ աշխատում էին թեզերը Արցախի խնդրի շուրջ: Մասնավորապես, առցանց

[11] Vaccari, C., & Chadwick, A. (2020). Deepfakes and disinformation: Exploring the impact of synthetic political video on deception, uncertainty, and trust in news. Social Media+ Society, 6(1), 2056305120903408

[12] Ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները հայաստանյան առցանց մեդիայում. սոցիոլոգիական հետազոտություն: Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Երևան, 2021, էջ 24

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 28

[14] Արձանագրենք, որ այդ դեղամիջոցը ստեղծվել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ բուժման նպատակով, սակայն մինչ օրս դրա արդյունավետությունը գիտականորեն՝ կլինիկական փորձարկման միջոցով, ապացուցված չէ:

լրատվական դաշտում մի շարք սոցիալական ՁԼՄ-ներ տարածում էին «իշխանությունը Սորոսի դավադիր պլանն է իրագործում», «իշխանությունները հողեր են հանձնում», և այլն:[15] Պետք է նկատել, որ այս և մի շարք այլ թեզեր տարածվում էին հենց սոցիալական ցանցերի լրատվականներից:

Այցելության խթանում և կոմերցիոն շահեր. քլիքբեյթերը՝ սխալ տեղեկատվության աղբյուր

«Քլիքբեյթը» տեղեկատվական խայծի տեսակ է, որի նպատակն է էջի այցելությունների կամ երթևեկի միջոցով նպաստել գովազդների աշխատանքին՝ այդ կերպ նաև եկամուտների գեներացմանը:[16] Համապատասխանաբար, նման աշխատաոճի և հետապնդած նպատակի պայմաններում խոսք չի կարող գնալ հավաստի և բարեխիղճ, ինչպես նաև էթիկայի նորմերին համապատասխանող բովանդակության ստեղծման մասին:

«Բացառիկն» ու «սենսացիան». սխալ տեղեկատվության ինդիկատորներ

Այն, թե ինչպես է վերնագրվում լրատվական հոդվածը, շատ բան կարող է հուշել նյութի որակի մասին: Հիմնականում նման ոչ մասնագիտական և հուզառատ գլխագրերով հոդվածները կա՛մ չեն համապատասխանում բուն վերնագրին կա՛մ թերի տեղեկատվություն են փոխանցում դրա մասին: Բնականաբար, ոչ ամբողջական տեղեկատվությունը նախապատրաստում է պարարտ մանիպուլյացիոն դաշտ:

Ամփոփում

Այսպիսով, կարելի է գալ մի քանի եզրահանգումների:

1. Տեղեկատվության սպառման համատեքստում ապատեղեկատվությունը միակ վտանգը չէ. այն ուղեկցվում է քաղաքական և գաղափարական բևեռացմամբ, քաղաքական ատելության խոսքի սրացմամբ և ոչ առողջ ու ոչ կառուցողական քաղաքական հաղորդակցմամբ:
2. Ապատեղեկատվության տարածումը համամարդկային և գլոբալ հիմնախնդիր է, և չկա ընդունված գործիքակազմ կամ պետական ռազմավարություն, որը կտանի դրա ի սպառ վերացմանը: Արդյունավետ ջանքերը կարող են սահմանափակել, իսկ որոշ դեպքերում՝ նաև վերահաս կանխել դրա հնարավոր տարածումը:
3. Հասարակության թվային և ինֆորմացիոն զինումը, մեդիա հիգիենայի պահպանումը և լրատվական հոսքերում արագ և քննադատորեն կողմնորոշվելու ունակության զարգացումը կարող են պաշտպանել մարդկանց քաղաքական մանիպուլյացիաներից, ապակողմնորոշված լինելուց և քաղաքական վարքաբանական այլ վտանգներից:
4. Անկախ և ազատ լրատվամիջոցների զարգացումը և լրագրության ինստիտուտի (թվային և ավանդական) նշանակալի բարեփոխումները կարող են նպաստել ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքարին:
5. Շարունակական և համապարփակ օրենսդրական բարեփոխումները թվային մեդիայի համատեքստում կարող են տանել ոլորտային դերակատարների

[15] Տե՛ս https://fip.am/10766
[16] Տե՛ս https://imarketlab.am/bararan/clickbait/

գործունեության արդյունավետ կարգավորմանը՝ ինչը մեդիա տիրույթը հնարավորինս և ակնառու կերպով կմաքրի իմիտացիոն ՁԼՄ-ից:

6. Պետական մարմինները առանձնակի ուշադրություն պետք է դարձնեն իրենց լիազորությունների շրջանակներում գործառնող հանրային հաղորդակցության պատասխանատու բաժիններին և անձանց: Հանրային դաշտ արտանետված ապատեղեկատվությունը հիմնականում գեներացվում և անխոչընդոտ տարածվում է հենց այս մակարդակում ոչ պրոֆեսիոնալ, թերի ու ոչ ժամանակին կատարված աշխատանքի հետևանքով:
7. Պետական մարմինների կողմից հանրային կապերի կարգավորման և հասարակության հետ արդյունավետ հաղորդակցության իրականացումը կարող է կարգավորել նաև ՁԼՄ-ի աշխատանքը և ուղղորդել լրագրողների ընթացիկ գործունեությունը: Պետության կողմից ազգային և պետական նշանակության օպերատիվ, ստույգ և կանոնավոր տեղեկատվության տրամադրումը նախ թույլ չի տա լրագրողներին ձեռնարկել կամայական գործողություններ՝ տեղեկատվության պակասի կամ բացակայության պատճառով՝ այդ կերպ տարածելով տեղեկատվական խուճապ հասարակության շրջանում: Մյուս կողմից, կարիք չի լինի ավելորդ ջանքեր գործադրել և ռեսուրսեր կենտրոնացնել արդեն իսկ ձևավորված և լրատվական դաշտ արտանետված ապատեղեկատվության հերքման համար:
8. Ապատեղեկատվության տարածումը և դրա բացասական ազդեցությունները հասարակության ընկալման և հետագա գնահատականների վրա չի կարող և չպետք է դիտարկվի միակողմանի պատասխանատվության գործընթաց:
   Այլևս կարծրատիպային է այն մտածողությունը, թե ապատեղեկատվության տարածման գործում կան պատասխանատուներ՝ օրինակ Ադրբեջանը, Ռուսաստանը, ՀՀ իշխանությունները, ընդդիմությունը կամ առանձին մարդիկ: Ապատեղեկատվության տարածումը կենդանի շղթա է, որի կենսունակության պահպանության մեջ յուրաքանչյուր դերակատար ունի իր ուրույն դերակատարումը: Համապատասխանաբար, եթե հասարակության լայն շրջանակ հավատում է տարածված կեղծիքին, ապա այն չի տիրապետում այն հմտություններին և չունի այն անհրաժեշտ գիտելիքը, որը կպաշտպաներ նրան այդ վտանգից: Եթե թվային ՁԼՄ-ներն առանց համապատասխան ստուգիչ ընթացակարգի արտատպում են թշնամական երկրի լրատվական աղբյուրներից, ապա խնդիրը ոչ զարգացած և էթիկայի նորմերին չհամապատասխանող լրագրողական համայնքն է, այլ ոչ միայն ապատեղեկատվության սկզբնաղբյուրը:

Ժողովրդավարությունը չի լուծում ապատեղեկատվության հիմնախնդիրը, սակայն ժողովրդավարական կայուն զարգացումը և ինստիտուցիոնալ ամրապնդումը կարգավորում են հասարակություն-պետություն երկխոսությունը, խթանում են առողջ քաղաքական մասնակցությունը, շեշտադրում են քաղաքացիական հասարակության, մեդիայի կարևոր դերակատարումը հանրային և պետական որոշումների կայացման գործում՝ այդ կերպ ամրապնդելով վստահությունը և պատասխանատվությունը շրջանառվող տեղեկատվության հանդեպ, որը վերը նշված բոլոր գործընթացների հիմնասյունն է հանդիսանում:

Էդգար Վարդանյան

Ինքնության բացասական շահարկումը հակաժողովրդավարական քարոզչությունում

Ծայրահեղ աջ պոպուլիզմը և ինքնության բացասական շահարկումը

Հակաժողովրդավարական, հակաազատական քարոզչությունը աշխարհի տարբեր երկրներում ունենում է տարբեր դրսևորումներ և բաղադրիչներ: Այդուհանդերձ այդ քարոզչությունը պարունակում է նաև ունիվերսալ բաղադրիչներ: Դրանց թվում իրենց ուրույն տեղն ունեն ինքնության հետ կապված հարցերի տարատեսակ բացասական շահարկումները:

Այստեղ բացասական շահարկում ասելով մենք հիմնվելու ենք մարդաբան Նիկոլ Մարգարյանի հետևյալ սահմանման վրա՝ «*Բացասական շահարկումը մարդկանց գիտակցության և հույզերի վրա ներգործության եղանակ է, որը հրահրում է այնպիսի արարքներ և հուզական զգացողություններ, որոնք ծառայում են շահարկուի նեղ անձնական կամ խմբային շահերին, չեն արտահայտում շահարկվողի անկեղծ ցանկությունները, և հակասում են հանրային շահին ու մարդու հիմնային իրավունքներին»*:[1]

Ինքնությունը շատ կարևոր տեղ է գրավում մարդկանց կյանքում: Շատերը չեն պատկերացնում կյանքն առանց իրենց այս կամ այն ինքնության: Եվ երբ հաջողվում է այդպիսի մարդկանց համոզել, որ նրանց այս կամ այն ինքնությունը վտանգված է, նրանք անհանգիստ և էմոցիոնալ են դառնում: Հետո, երբ նրանց համոզում են, որ վտանգը գալիս է կոնկրետ տեղից, երբ ցույց են տալիս մեկին, ով իբր ցանկանում է ոչնչացնել նրանց ինքնությունը՝ մարդկանց մոտ ցանկություն է առաջանում չեզոքացնել վտանգի աղբյուրը: Իսկ երբ համոզում են, որ կա կազմակերպված ուժ, որի նպատակը հենց այդ վտանգի չեզոքացումն է և հետո մատնանշում են այդ ուժին՝ մարդիկ սկսում են առնվազն համակրել վերջինիս:

Այս ամենը նշանակում է, որ, օրինակ, եթե որևէ հակաժողովրդավարական, հակաազատական քաղաքական ուժ ցանկանում է կողմնակիցներ գտնել, ապա նրա համար ինքնության հետ կապված հարցերի շահարկումը արդյունավետ գործիք է դառնում այդ նպատակին հասնելու համար: Նախ՝ նա համոզում է մարդկանց, որ ինչ-որ ուժ/ուժեր սպառնում են նրանց ինքնությանը. երբ մարդիկ համոզվեցին դրանում, նրանց հավաքագրումը, ինչպես ասում են, տեխնիկայի գործ է:

Ինքնությանն անդրադառնալը տարբեր պետությունների ծայրահեղ աջ պոպուլիստների ամենասիրված գործիքներից է: Ծայրահեղ աջ պոպուլիստները, որպես կանոն, հիմնականում անդրադառնում են մարդկանց էթնիկ, ազգային կամ մշակութային ինքնությանը:

Պոպուլիզմ հասկացությունը այստեղ դիտարկվում է որպես ոչ ինքնաբավ գաղափարախոսություն կամ քաղաքական ռազմավարություն, որի հիմնական

[1] Ն. Մարգարյան, Նեգատիվ շահարկման հնարքները հանրային հնչեղություն ունեցող ուղերձներում և դրանց նույնականացման ցուցիչների հանրայնացումը, https://www.osf.am/wp-content/uploads//2020/06/Բացահայտիր-շահարկումը.-Բացասական-շահարկման-հնարքները-Ֆեյսբուք-սոցիալական-ցանցում-համառոտագիր.pdf

բաղադրիչն է կյանքը որպես «բարի», «առաքինի» միասնական կամք ունեցող միատարր ժողովրդի և «ուրիշների» (օրինակ՝ կոսմոպոլիտ էլիտաների, տարբեր փոքրամասնությունների, լիբերալ կառույցների) միջև հավերժ պայքարի թաթերաբեմ դիտարկելն է:

Ծայրահեղ աջ պոպուլիզմը անտեսում է զսպումների և հակակշիռների մեխանիզմը, նախընտրում է մոնոմշակույթը, փակ սահմանները, ծայրահեղ պահպանողական արժեքները:[2] Ծայրահեղ աջ պոպուլիզմի գաղափարախոսական տարրերից են դավադրապաշտական մտածողությունը և միջազգային իրավունքի անտեսումը:
Ծայրահեղ աջ պոպուլիզմը մեծ կարևորություն է տալիս էթնիկ, ռասայական, ազգային ինքնությանը: Այն առաջ է տանում այն գաղափարը, որ էթնիկ, ազգային կամ ռասայական որևէ խումբ վտանգված է, օրինակ՝ էմիգրացիայի, գլոբալիզացիայի, լիբերալիզմի տարածման պատճառով: Այն խրախուսում է «մենք ընդդեմ նրանց» մոտեցումը: Ծայրահեղ աջ պոպուլիստները հաճախ փորձում են համոզել մարդկանց, որ միջազգային ինստիտուտները, անդրազգային կազմակերպությունները ցանկանում են վերացնել ազգային արժեքները և մշակույթը, կրոնը, ավանդույթները: Ըստ էության, ծայրահեղ աջ պոպուլիստները ընդդիմանում են մշակութային բազմազանությանը:

Հարկ է նշել, որ Հայաստանը նունպես անմասն չի մնացել ծայրահեղ աջ պոպուլիզմի տարածման համաշխարհային թրենդից: Բացի այդ, Հայաստանում էթնոազգային, մշակութային ինքնությանը անդրադարձ կատարելը, իմ դիտարկումներով, միշտ էլ ամենատարածված նեգատիվ շահարկումներից է եղել էթնոազգայնական, ծայրահեղ սոցիալ-պահպանողական դիրքերից հանդես եկող ուժերի կողմից:

Էթնոազգային ինքնությունը պաշտպանելու դիսկուրսը

Տարբեր երկրների հակաժողովրդավարական քարոզչությունում առանձնանում է նարատիվների մի ամբողջ խումբ, որոնց հիմնական գաղափարը, ինչպես արդեն նշել ենք, այն է, որ ազատական արժեքներ դավանող տարատեսակ խմբերը, միջազգային կառույցները, լիբերալ-դեմոկրատական պետությունները ցանկանում են վերացնել տարբեր ժողովուրդների էթնոազգային ինքնությունը, ուստի՝ հարկ է կենաց-մահու պայքար մղել դա թույլ չտալու համար: Այս նարատիվը բավականին արդյունավետ նեգատիվ շահարկում է: Նախ, շատերի համար ազգային ինքնությունն առաջնային ինքնություններից է, առանց որի շատերը չեն պատկերացնում իրենց գոյությունը: Երկրորդը՝ խնդիրն այն է, որ արդիականացումը, գիտության զարգացումը, գլոբալիզացիան իսկապես փոխում են մարդկանց, մարդկանց մեծ խմբերի արժեքային պատկերացումները՝ բնականորեն համապատասխանեցնելով դրանք ժամանակի պահանջներին: Օրինակ՝ ըստ Ինգլհարթի և Վելցելի, սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց տեղի են ունենում արժեքային փոփոխություններ, որոնք, իրենց հերթին, վերափոխում են կրոնական համոզմունքները, աշխատելու մոտիվացիան, ծնելիության մակարդակը, գենդերային դերերը, սեռական նորմերը, ինչպես նաև առաջացնում են զանգվածային պահանջ՝ ստեղծել դեմոկրատական ինստիտուտներ, որոնք էլ վերնախավերից ավելի պատասխանատու վարք են ակնկալում:[3]

---

[2] Տես, օրինակ՝ Inglehart, R.F. & Norris, P. 'Trump, Brexit, and the Rise of Populism: Economic Have-Nots and Cultural Backlash', HKS Faculty Research Working Paper Series, RWP16-026, August 2016.
[3] Inglehart, R., & Welzel, C. (2005). Modernization, Cultural Change, and Democracy: The Human Development Sequence. Cambridge: Cambridge University Press, p. 15

Այսինքն, այդ փոփոխությունները բնական զարգացման արդյունք են, մարդկանց ազգային ինքնությունն էլ փոփոխվող երևույթ է: Սակայն ոչ բոլորն են պատրաստ լինում նման փոփոխություններին: Շատերը վերջիններս դիտարկում են որպես, իրենց կարծիքով, փոփոխման չենթակա էթնոազգային ինքնությունը խաթարող, արհեստական, խորթ, «դրսից» ներմուծված երևույթներ: Բնականաբար, ծայրահեղ աջ պոպուլիստները հենց նման մտածողություն ունեցող մարդկանց են փորձում հավաքագրել, ինչպես նաև իրենց քարոզչությունը կառուցում են հենց այսպիսի մտածողություն սերմանելու ուղղությամբ: Նրանք շատ հաճախ կարող են օգտագործել ազգային հպարտությունը և հայրենասիրությունը, համախմբման և միասնականության գաղափարները որպես գործիք մարդկանց մոբիլիզացնելու, նրանց «ուրիշների» դեմ ուղղելու և նրանց նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով: Ընդհանուր առմամբ, հակադեմոկրատական քարոզչության նպատակներից մեկը՝ էթնիկ, կրոնական, մշակութային, գաղափարական որոշակի խմբերի դեմոնիզացիան է, վերջիններիս անմարդկայնացումն է, նրանցից թշնամի ստեղծելն է: Այս ամենը, իր հերթին, հանգեցնում է դեմոկրատական կայունության խաթարմանը, իսկ մրցակցային հարաբերությունների՝ թշնամականի վերածվելուն: Իմիջայլոց, Եվրախորհրդարանում աջ պոպուլիստական կուսակցություններից բաղկացած խումբը կոչվում է «Ինքնություն և ժողովրդավարություն», ինչը ևս մեկ անգամ խոսում է այն թեզի օգտին, որ ինքնության շահարկումը աջ պոպուլիստների հիմնական նարատիվներից մեկն է, եթե ոչ ամենահիմնականը:

Ազգային ինքնության վտանգված լինելու մասին նարատիվը որոշ հետխորհրդային երկրներում

Ստորև հակիրճ կներկայացնենք հետխորհրդային երկրների՝ Էստոնիայի, Լատվիայի, Մոլդովայի, Ռուսաստանի և Վրաստանի էթնոազգային կամ ազգային ինքնությանը վերաբերող աջ պոպուլիստական բնույթի նարատիվներից որոշակի շեշտադրումներ:

Էստոնիայի ծայրահեղ աջ պոպուլիստները հաճախ նշում են, որ Արևմուտքը գեյերի, ներգաղթի, լիբերալ դոգմայի միջոցով քայքայում է Էստոնիան, իսկ արևմտյան լիբերալիզմի գաղափարները սպառնալիք են էստոնական ինքնության համար:[4]

Լատվիայի ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսում մեծ տեղ է զբաղեցնում «էթնիկ մաքրության» պահպանման անհրաժեշտության գաղափարը: Այստեղ նույնպես թշնամու դերում լիբերալիզմն է, բարերար Ջորջ Սորոսը, որը, ըստ լատվիացի աջ պոպուլիստների, տարածում է կոսմոպոլիտ արժեքներ, ցանկանում է վերացնել լատվիական ինքնությունը և իշխանության գալ Լատվիայում:[5]

Մոլդովայի ծայրահեղ աջ պոպուլիստների համար որպես ազգային ինքնությանը սպառնացող սուբյեկտ է դիտարկվում ԼԳԲՏ համայնքը: Հայտարարվում է, որ Արևմուտքը ցանկանում է խեղել մոլդովական ազգային նկարագիրը՝ գեյերի

[4] Denis Cenusa, Tamta Gelashvili, Anna Medvedeva, "Right-wing populism in Associated countries: A Challenge for Democracy", Policy Paper No. 24, Georgian Institute of Politics, June 2021.
[5] Նույն տեղում

ամուսնության օրինականացման, գեյերի կողմից երեխաներ որդեգրելուն հասնելու, ուղղափառ արժեքները վերացնելու միջոցով:[6]

Ռուսաստանում ազգային ինքնության բացասական շահարկման վրա կառուցած հակաժողովրդավարական քարոզչության հիմնական գաղափարախոսական նարատիվն ավանդական արժեքները պաշտպանելու անհրաժեշտության մասին է: Այստեղ նշվում է, որ Արևմուտքն իբր ցանկանում է ոչնչացնել այդ արժեքները, իսկ Ռուսաստանն այնպիսի մի կենտրոն է, որն ի զորու է զբաղվել դրանց պաշտպանությամբ ամբողջ աշխարհում: Ստորև բերենք այդպիսի նարատիվներից որոշ օրինակներ.

> «Մեր ազգային ինքնության հիմքը եղել է և շարունակում է մնալ սերունդների շարունակականությունը, ավանդույթներին հավատարմությունը, բարձր հոգևոր ու բարոյական ուղենիշները: Դրանք արտացոլվում են, կիրառվում են, զարգանում են մշակույթի, ստեղծագործության մեջ, առօրյա կյանքում: Ինչպես գիտեք, վերջերս հաստատվեց «Ավանդական արժեքների պահպանության և ամրապնդման պետական քաղաքականության» հիմքերը: Դրանք, իհարկե, ներառում են պատմական հիշողությունը»:[7]

> «Ավանդական արժեքները ներառում են տղամարդու և կնոջ միության հռչակումը որպես ամուսնության միակ հնարավոր տարբերակ: Սա մեզ պաշտպանում է արևմտյան արժեքների ապականիչ ազդեցությունից՝ միասեռ ամուսնություններից, գենդերային ինքնությունից և այլն»:[8]

> «Ռուսաստանը հետևողականորեն պաշտպանում է ավանդական ընտանեկան արժեքները: Մենք բացահայտորեն խոսում ենք այն մասին, որ մերժում ենք արևմտյան պետությունների՝ Միացյալ Նահանգների գլխավորությամբ այլ երկրներին մարդու իրավունքների մասին կեղծ-ազատական և խեղաթյուրված գաղափարներ պարտադրելու փորձերը»:[9]

Վրաստանի հակաժողովրդավարական դիսկուրսում գրեթե նույն շեշտադրումներն են: Օրինակ, ծայրահեղ աջ պոպուլիստական «Վրացական արշավ» նախաձեռնության ներկայացուցիչ Սանդրո Բրեգաձեն մասնավորապես հայտարարում է՝ *«Ջորջ Սորոսի և ուրիշների նպատակը Վրաստանը առանց վրացիների դարձնելն է, կամ, նույնիսկ եթե վրացիները դեռ շարունակեն ապրել, ապա նրանց կդարձնեն թմրամոլ, մարմնավաճառ և այլն»:*[10] Իսկ կառավարող «Վրացական երազանք» կուսակցության խոսնակ Իրակլի Կոբախիձեն մասնավորապես նշում է՝ *«մի շարք ՀԿ-ներ քննադատելով Վրաց Ուղղափառ Եկեղեցուն պայքարում են վրացական ազգային ինքնության դեմ»* և զգուշացնում է, որ եթե դրա դեմը չառնվի, ապա վրացիները կզրկվեն իրենց ինքնությունից:[11] Մեկ այլ օրինակ.

---

[6] Նույն տեղում
[7] https://tass.ru/obschestvo/16329405
[8] https://iz.ru/1358361/2022-07-01/politolog-otcenil-izmeneniia-v-rf-posle-priniatiia-popravok-v-konstitutciiu
[9] https://iz.ru/1431696/2022-11-26/posolstvo-rf-vyrazilo-nedovolstvo-kritikoi-ssha-zakona-ob-lgbt
[10] Obieqtivi TV, Ghamis Studia, 22 January 2018, http://www.myvideo.ge/v/3504890
[11] https://civil.ge/archives/528611

«Ինչպե՞ս են ազատությանն ու ճշմարտությանը հակառակվող ուժերը փորձում հասնել իրենց նպատակներին: Անկասկած, ավանդական ընտանեկան արժեքները ոչնչացնելով և կեղծ ազատությունները պարտադրելով՝ ԼԳԲՏՔ+ քարոզչությամբ... ինչպես նաև պարտադրելով այսպես կոչված «նորարարություններ», որոնք կկտրեն մարդկանց սեփական արմատներից, ընտանիքից, ավանդույթներից, մշակույթից և պատմությունից: Նրանք դա անում են, որովհետև հեշտ է կառավարել արմատազուրկ մարդուն՝ մեկին, ով մոռացել է իր պատմությունն ու հավատքը»:[12]

Էթնոազգային ինքնության վտանգված լինելու մասին նարատիվը հայաստանյան աջ պոպուլիստական դիսկուրսում

Հայաստանյան ծայրահեղ աջ պոպուլիստական դիսկուրսը նույնպես հագեցած է հիշատակված նարատիվներով: Ստորև կերկայացնենք հայաստանյան մամուլում տեղ գտած տարբեր գործիչների խոսքերից որոշ հատվածներ, ապա կփորձնենք վերլուծել հետխորհրդային տարածքում ինքնությանը վերաբերող աջ պոպուլիստական հակաժողովրդավարականն նարատիվների շեշտադրումները:

«Համաշխարհային էլիտայի մեջ, որն առաջ էր տանում այդ գլոբալիստական հոսանքը, ամենավառ ներկայացուցիչն է Սորոսը, այն կապիտալիստը, որը բաց ձևով է առաջ տանում այդ գաղափարախոսությունը»: [13]

«Իշխանությունն այլևս չի թաքցնում, որ պայքարում է այն արժեքների, ավանդույթների, նորմերի ու ինստիտուտների դեմ, որոնք հավաքականության մեջ հանդես են գալիս՝ որպես ազգային ինքնություն: Այդ պայքարը բազմաշերտ է ու մղվում է ամենատարբեր հարթություններով՝ սկսած հանրային գիտակցությունից, ենթագիտակցությունից, հիշողությունից ու արժանապատվությունից, մինչև ազգային ինքնությունը պահպանելու առաքելություն ունեցող ինստիտուտներ՝ Հայ Առաքելական եկեղեցի, բանակ, սոցիալական նորմեր, և այդպես շարունակ:..... Պարզապես աշխարհաքաղաքական ավանտյուրան, որում ներքաշվել է Փաշինյանը, հնարավոր է միայն այն դեպքում, երբ կա՛մ հայ հասարակությունը վերջնականապես կզրկվի ազգային ինքնությունից, կամ դա կդադարի գործառութային նշանակություն ունենալ մարդկանց վարքագծի և կողմնորոշումների վրա»: [14]

«Կասեցնել մեր ազգային ինքնությունը քայքայող օտարածին ծրագրերը»:[15]

«Ազգային ինքնության դեմ մարտնչող, կոսմոպոլիտ անհայրենիքների շարունակական դիվերսիաներ». «Ինձ համար ցավ է եկեղեցուն խնդրողի դերում տեսնելը...»:[16]

«Բա որ ասում եմ՝ սա ինքնության դեմ դիվերսիա է» . «Սրանք ամեն ազգայինից ընկնում են ցնցումների, կոնվուլսիաների, դողէրոցքի մեջ»:[17]

---

[12] https://garibashvili.ge/en/n/all/konservatiuli_politikuri_mokmedebis_konferentsiis_CPAC_gakhsniti_sesia

[13] www.vazgenmanukyan.am/am/22/584/layn-tchanaparhi-vravandaki-mej-vazgen-manukyan.htm/

[14] https://168.am/2023/05/04/1868812.html

[15] https://www.pastinfo.am/hy/news/2023/06/13/d69uhoq5j/1593094

[16] www.hhk.am/hy/news/item/2020/07/09/Armen244656/

[17] www.hhk.am/hy/news/item/2020/07/12/armen68766/

«Ասել, թե սրանք պատահական, մասնագիտական խնդիրներ են, կնշանակի չգիտակցել այն բոլոր քաղաքական, բարոյական, հոգևոր, արժեքաբանական նպատակները, որ քողարկված են այս «բարեփոխումներում»: Հստակ է և աներկբա՝ այս «հանձնառությունները» ազգային դիմագիծ փոխելու, ազգային դիմադրողականություն թուլացնելու ծրագիր են հետապնդում: Մեր՝ հասարակության խնդիրն է դիմադրել և չհանդուրժել այն, ինչի համար տասնյակ սերունդների համար ինքնության կոդ է եղել»: [18]

«Այսպիսով, արևմտյան համապատասխան կենտրոնների կողմից մշակված նեոլիբերալ գաղափարախոսությունը՝ ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության, մարդկանց իրավահավասարության և ազատության շղարշի ներքո, իրականում ուղղված է մարդու հոգևոր և ֆիզիկական այլասերմանը, ավանդական ինստիտուտների ոչնչացմանը, թիրախավորելով դրանք՝ որպես Արևմուտքի համաշխարհային գերիշխանությանը դիմադրող կենսունակ օղակներ: Այսօր արդեն տեսնում ենք, որ մի շարք ժողովուրդներ, գիտակցելով իրենց ազգային ինքնության կորստի վտանգը, դիմադրում են արևմտյան նեոլիբերալիզմի էքսպանսիային: Ուստի, եկել է նաև մեր ժամանակը՝ միանալ այդ ազատագրական պայքարին, ասել է՝ միջազգային դիմադրական ճակատին»:[19]

«Այս օրերին, երբ մարդու իրավունքների կոպիտ խաղտմամբ սեփական տներից բռնի տեղահանվում են մեր արցախյան հայրենակիցները, երբ մեր ազգը բարոյական խորը ճգնաժամի մեջ է մարդու իրավունքների տիկին պաշտպանը մեծ խանդավառությամբ մասնակցում է Հայաստանում ԼԳԲՏ համայնքի շահերը սպասարկող, ասել է թե պիղծ արժեքների տարածմանը և դրանց ջատագովմանը ծառայող, նոր գրասենյակի բացման հանդիսավոր արարողությանը:
Դատապարտելի է որևէ ազգակործան և ավանդական արժեքները խեղող նախաձեռնությանը կամ միջոցառմանը որևէ կերպ, որևէ պետական պաշտոնյայի մասնակցությունը, հակառակ դեպքում՝ կարելի է հասկանալ, որ այսօրվա իշխանությունները լուռ կամ հրապարակային սատարում և կամ համակրում են նման արժեհամակարգերի տարածմանը և դրանց կրողներին»:[20]

«Այս իշխանություններն իրենց կեղտոտ թաթերը մղում են դեպի մեր հոգիները, մեր ավանդական հայկական հոգիները պղծել են ուզում: Մամուլում շրջանառվում է, որ պատրաստված է նախագիծ սեռափոխության մասին, որով թույլ են տալու նույնասեռականներն ամուսնանան և գրանցվեն պետականորեն, մեզ ուզում են կտրել մեր արմատից դարձնելով՝ չհայ»:[21]

Ամփոփում

Վերոնշյալ օրինակներից տեսնում ենք, որ հետխորհրդային տարածքում հակաժողովրդավարական քարոզչության հիմնական նարատիվներից մեկն այն է, որ Արևմուտքը, որը բացկացած է լիբերալ-դեմոկրատական երկրներից, իբր ցանկանում է այլասերել, «պղծել» այս կամ այն հասարակությանը: Այսինքն, հետխորհրդային

[18] https://yerevan.today/all/krtakan/59953/inchou%D5%9E-aysqan-hayatyac-lilit-galstyany%D5%9D-kgmsn-qaghaqakanoutyan-masin
[19] https://www.iravunk.com/?p=244369&l=am
[20] https://www.iravunk.com/?p=235457&l=am
[21] https://yerevan.today/all/society/104307/incho%D5%9Eu-petq-e-tsern-iravounq-ounena-im-herosin-anpatvi-ou-mna-anpatij%E2%80%A4-srapionyan

տարածքում հակաժողովրդավարական քարոզչություն իրականացնողները ցանկանում են համոզել մարդկանց, որ լիբերալ-դեմոկրատիան հիմնված է «վատ», «այլասերված» արժեքների վրա և որ Արևմուտքն ունի այդ «վատ» արժեքներն ամենուր տարածելու ծրագիր: Սովորաբար «այլասերող արժեքներ» ասելով նրանք նկատի ունեն լիբերալ արժեքները, սակայն առաջ է մղվում այն գաղափարը, որ դրանք իբր հետերոսեքսուալ մարդկանց ինքնության դեմ մշակված արժեքներ են: Այլ կերպ ասած՝ մարդկանց փորձում են համոզել, որ լիբերալ-դեմոկրատիան ոչ թե ժողովրդի իշխանության հիման վրա կառուցված մարդակենտրոն քաղաքական համակարգ է, այլ մի բան, որն ուղղված է հետերոսեքսուալ մարդկանց դեմ, որ իբր արևմտյան արժեքները միտված են հետերոսեքսուալ մարդկանց միասեռական դարձնելուն: Այս թեզը հիմնված է բացասական շահարկման հետևյալ սխեմայի վրա. այն փաստը, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում կայացած լիբերալ-դեմոկրատական երկրներում սեռական փոքրամասնությունների նկատմամբ չի իրականացվում խտրական քաղաքականություն, որ նրանց իրավունքները հնարավորինս պաշտպանվում են և որ նրանք հնարավորություն ունեն բարձրաձայնելու և ազատորեն խոսելու իրենց կողմնորոշման մասին, ներկայացվում է այնպես, կարծես լիբերալ-դեմոկրատիան դրդում է և նույնիսկ պարտադրում է հետերոսեքսուալ մարդկանց միասեռական դառնալ: Այս նարատիվն ուղղված է հետերոսեքսուալ մարդկանց մոտ սեռական ինքնության կորստի վախեր և, միաժամանակ, լիբերալ-դեմոկրատիայի նկատմամբ հակակրանք առաջացնելուն՝ որպես մի բանի, որը վտանգում է նրանց սեռական ինքնությունը:

Նկատվում է, որ հիշատակված երկրների աջ պոպուլիստական դիսկուրսում առաջ է քաշվում մեկ այլ գաղափար. որ Արևմուտքը նպատակ ունի լիբերալ գաղափարների տարածման և այլ միջոցներով վերացնել ազգերը և նրանց ազգային ինքնությունը: Այս թեզը կապված է առաջին թեզի հետ, սակայն որոշակի նրբերանգներ ունի: Այստեղ արդեն ավելի շատ մանիպուլացվում է այն փաստը, որ լիբերալ-դեմոկրատական գաղափարների վրա կառուցված միջազգային ինստիտուտները որոշակի սահմանափակումներ են դնում երկրների վրա: Օրինակ, մարդու իրավունքները ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր այլևս երկրների սուվերեն տիրույթի հարց չէ. ՄԱԿ-ի անդամ որևէ երկրի ղեկավարությունը չի կարող ասել, որ ինչ կուզի այն էլ կանի իր երկրի քաղաքացիների նկատմամբ: Այս հանգամանքն այնպես է շահարկվում, որպեսզի տպավորություն ստեղծվի, կարծես միջազգային կառույցները պարտադրում են երկրներին այս կամ այն վարքը, քաղաքականությունը, որոշումը, և որ դրանով վտանգվում է ազգերի գոյությունը: Բոլոր նրանք, ովքեր հանդես են գալիս անդրազգային խորը համագործակցության, ունիվերսալ ազատական նորմերի օգտին պիտակավորվում են որպես ապազգային գործիչներ, ազգի դավաճաններ և այլն:

Շատ հաճախ ինքնության հետ կապված բացասական շահարկման անբաժան մաս է հանդիսանում ավանդական ընտանեկան արժեքներին հղում անելը: Հարկ է նաև նշել, որ, որպես կանոն, հստակ չի էլ նշվում, թե որոնք են այդ արժեքները: Հաշվի առնելով, որ շատերի համար ընտանիքն ամենակարևոր բաներից մեկն է, առաջ է մղվում այն գաղափարը, որ լիբերալ-դեմոկրատիան քանդում է ավանդական ընտանիքը: Այս թեզը հիմնված է հետևյալ շահարկման վրա՝ առաջ է քաշվում որևէ գիտական հիմք չունեցող թեզ, թե իբր ընտանիքի մոդելն անփոփոխ մի բան է և այն բաղկացած է կին-տղամարդ ամուսնական զույգից, մի քանի երեխաներից, հաճախ նաև ծնողների ծնողներից և նշվում է, որ դա մի ինստիտուտ է, որտեղ կա դերերի հստակ բաժանում և հստակ հիերարխիա: Այնուհետև՝ շահարկվում է այն

գաղափարը, որ լիբերալ-դեմոկրատիան վերացնում է այդ դերերը և դրանով իբր անմարդկայնացնում է ընտանիքի ներսում առկա փոխհարաբերությունները, վերացնում է հարգանքը մեկը մյուսի նկատմամբ և այդպիսով քանդում է այն՝ փոխարենը հասարակություն ներմուծելով քաոտիկ, անհարգալից, «այլասերված» հարաբերություններ:

Հարկ է նշել, որ բոլոր թեզերին առնվազն միավորում է մեկ բան՝ դրանք հիմնված են այն շահարկման վրա, որ կան ժամանակի մեջ անփոփոխ ճշմարտություններ, որոնք սակայն Արևմուտքն իր գործակալների միջոցով, ցանկանում է վերացնել՝ սեփական իշխանությունն ամենուրեք հաստատելու նպատակով: